

յեայ ըստանուեց Անույ, Կարսի, Կօռու) Սիւնեաց, Արծրու-  
նեաց ևլն. Թագաւորութիւնները: Արաբական շրջանը խոր  
ազդեցութիւն թողեց մեր երկրում: Ուրիշ ամեն շրջաններից  
աւելի՝ հայկական ճարտարապետութեան կնիքը հայկական  
բարձրաւանդակի վերայ երևաց արաբական շրջանում: Գուցէ  
այն պատճառով որ ազատ շրջաններից յետոյ ամենից մտաբ  
ղա է մեզ համար. իսկ ամենակուլ ժամանակից և բարբարոս-  
ների ձեռքից անյայտացել են Արշակունեաց հզօր թագաւո-  
րութեան, և նրան յաջորդող անիշխանութեան յիշատակա-  
բանները. բայց մինչև այժմ կանգուն են Բագրատունեաց մայ-  
րաքաղաքների (Անի, Կարս ևլն.) մնացորդները—այդ շրջանում  
շինուած տաճարները: Բագրատունեաց անկմամբ վերջանում է  
Հայոց պատմութեան առաջին կամ ներքին ազատութեան շրջ-  
անը և սկսում երկրորդ կամ ստրկութեան շրջան:

(Շարունակ.)

Վրբ Բնց. Մարգարեան.



### ԱՇՆԱՆԸ

### (Գիրքայման)

Երբ նա վերջին անգամ քաղաքից դուրս դաշտումն էր,  
արտերն արդէն հասունացել էին: Արևի ոսկեգոյն ճառագայթ-  
ներով լցուած հասկերի անփոյթ ալեկոծւող ովկիանը մի ինչ  
որ անհասկանալի երկիւղ գցեց նրա հիւանդ սիրտը... Եւ երբ  
նա իր հայեացքը ուղղեց դետնին, տեսաւ որ իր շուրջը կանաչ  
ու դեղին հասկերի միջից փոքրիկ կապտագոյն ծաղիկները քնքոյշ  
և աղերսալի իրան են նայում: «Վերցրու մեզ, հիւանդ մա-  
նուկ», ասում էին նրանք:

Մեծ դժուարութեամբ նա քաղեց նրանցից մի փունջ և  
յոգնած ու ուրբ—մուրբ քայլերով դարձաւ տուն:...

\* \*

Վերջերս արդէն նա սկսել էր վախենալ իր սեպհական  
անկողնից, որի մէջ պառկած սարսափելի ախուր օրեր և ան-  
քուն գիշերներ էր անցկացնում: Երբեմն նա ընտրովին հագ-  
նուած կռթնում էր իր մահճին և անհամբեր սպասում այն

երջանիկ բուպէին, երբ հրաշագեղ բնութիւնը կը կենդանացնի նրա թոյլ անդամները... նրա յոյսերը իրականացան...

\* \* \*

Երկար քամիներից և անձրևներից յետոյ վերջապէս եղանակը կարծես թէ լաւացաւ: Մի այդպիսի օր նա անից դուրս եկաւ և գնաց քաղաքից դուրս: Նա ենթադրում էր, որ դաշտ կը հասնի նախ քան արևի մայր մտնելը: Սակայն երբ հասաւ դաշտը, արդէն բնութեան գեղեցիկ ատարանի հրաշալի գոյները մթնանում և կերպարանափոխւում էին... Սրբ դանդաղ հանգչում էր... նորա հետ միասին մեռնում ու կորցնում էր իր բոլոր հմայքը և ամբողջ բնութիւնը...

Ուժասպառ ու յուսահատ նա յենուեց ցաւկապատին և իր աղերսանքով ու քնքշութեամբ լի հայեացքը ուղղեց դէպի արևմուտք, ուր մայր մտած արևը թողել էր իր հետևից մի շագանակագոյն բիծ, որպէս վերջին նշոյլ նրա հաւատի և յուսոյ:...

\* \* \*

Քամին ու անձրևը անվերջ ծեծում էին մերկ ու մուսլ գետինը... Ամբողջ շրջապատը ամայի ու ախար էր: Սրտերի սէջ կանգնած էր մի երկար, սև ու կիտով չափ թեքուած խաչ: Նա, կարծես զգալով մօտալուտ գիշերուայ սառնութիւնը, խոնարհ թեքուել էր դէպի գետին: հայցելով նրան, որ պատըսպարի իրան... վայրի բազերի երամբ մեծ աղմուկով եկաւ անցաւ, բարձրաձայն կանչելով. «Սյս գիշեր ցուրտ պիտի լինի: Թռչենք շուտով!»... նրանց ձայնը լսելով, այս ու այն քարի տակ թագնաւած, փոքրիկ դաշտային թռչունները թևառորուեցին և թռան նրանց յետևից հեռու, հեռու...

Անթախանցելի խաւարը իջաւ, մեծացաւ, թանձրացաւ...

Արևմուտքում շագանակագոյն բիծը արդէն անհետացել և նրա տեղը բռնել էր մոխրագոյն ամպը...

Բոլորովին ուժասպառ նա ընկաւ աշնան սառը գետնի վրայ և դառնագին արտասուեց...

Փոխադրեց Ն. Հ.